ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Զերդ Սրբություն,

Խնդրեցինք Մեր սիրելի եղբորը՝ կարդինալ Ժան Վիլլեբրանդսին, այցելել Զերդ Սրբությանը սուրբ Էջմիածնի ձեր պատմական Աթոռում՝ ի գլուխ Հռոմի եկեղեցու մի պատվիրակության: Ցանկանում ենք, որ այս քայլը լինի Մեր երախտագիտական զգացմունքի մի նոր արտահայտություն այն այցելության համար, որ Դուք տվեցիք Մեզ Հռոմում երկու տարի առաջ և որի մասին Մեզ մի գեղեցիկ հուշագիրք ուղարկելու նրբազգացությունն ունեցաք:

Բացի այդ, կցանկանայինք, որ այս քայլը հանդիսանար նաև մեր և մեր եկեղեցիների միջև արդեն գոյություն ունեցող հաղորդությունը խորացնելու բաղձանքի մի արտահայտություն և դրսևորեր Մեր կամեցողությունը՝ օգտվելու սուրբ Հոգու կողմից ընծայված բոլոր առիթներից՝ առաջ ընթանալու համար այդ ճանապարհի վրա:

Մենք ուրախ ենք, որ, որպես հետևանք Զերդ Սրբության կողմից Մեզ տրված այցելության, արդեն զարգացել է փոխադարձ սիրո և անկեղծ գործակցության մի նոր ոգի Քրիստոսի եկեղեցու ծառայության գործում. աշխարհի շատ մասերում կաթոլիկ համայնքներն ու հայկական համայնքները ձեռք են բերել ի Քրիստոս իրենց միության մի նոր գիտակցություն:

Այժմ, երբ Մեր ներկայացուցիչները գալիս են Զերդ Սրբության մոտ, Մենք կցանկանայինք վերստին հավաստիացնել Ձեզ, թե որքան ուրախ ենք զգում Մեզ այս զարգացումների համար և որքան վստահ, որ ինքը՝ եկեղեցու Տերը պիտի շարունակի, իրեն հատուկ ճանապարհներով, առաջնորդել մեզ դեպի ամբողջական կատարումը խաղաղության և հաշտության սպասավորման, որ նա վստահել է իր եկեղեցու հովիվներին (Կորնթ. Բ 5—18):

Մաղթելով, որ ամենակարողն Աստված իր օրհնություններով լցնի Զերդ Սրբությանը, ձեր եկեղեցու եպիսկոպոսական դասին, հոգևորականությանը և հավատացյալներին, կրկին հայտնում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ողջ զգացմունքը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ՊՈՂՈՍ Զ

Վատիկան, 9 մայիսի 1972 թ.